ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Վանաձոր 27.01.2022թ. ժամը 13:00
Մասնակցում էին՝
նախագահ/ Դ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
անդամներ / Ն. ԱՆՏՈՆՅԱՆ, Կ. ԳԱԼՍՏՅԱՆ, Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, Գ. ԵԳԱՆՅԱՆ
քարտուղար՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. **«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների մասին.
4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1, Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

**«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

«Պիրամիդա Կվինտ» ՍՊԸ  «Շամս Գրուպ» ՍՊԸ  «Մխիթար Խաչատրյան» ԱՁ  «Մեդա Բոջուկյան» ՍՊԸ  «Յուլիան» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2, «ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**(Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

2.1 Մասնակիցների հայտերը համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3, Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների մասին.** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ներկայացված է Հավելված 1-ում:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների՝ թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հանձնաժողովը, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց՝ 01.02.2022թ. ժամը 13:00-ին Վանաձորի Ս. Զորյանի անվան թիվ 22 հիմնական դպրոցում (ք. Վանաձոր, Բանակի 29) մասնակիցների հետ կազմակերպել բանակցություններ: Բանակցությունների հրավիրվել են «Պիրամիդա Կվինտ» ՍՊԸ-ն, «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն, «Մխիթար Խաչատրյան» ԱՁ-ն, «Սեդա Բոջուկյան» ՍՊԸ-ն և «Յուլիան» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**01.02.2022թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**

3.4 01.02.2022թ. ժամը 13:00-ին Վանաձորի Ս. Զորյանի անվան թիվ 22 հիմնական դպրոցում (ք. Վանաձոր, Բանակի 29) մասնակիցների հետ կայացան բանակցություններ: «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն, «Սեդա Բոջուկյան» ՍՊԸ-ն բանակցությունների նիստին չկայացան, «Պիրամիդա Կվինտ» ՍՊԸ-ն, «Մխիթար Խաչատրյան» ԱՁ-ն և «Յուլիան» ՍՊԸ-ն ներկայացրին նոր գնային առաջարկներ:

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | «Պիրամիդա Կվինտ» ՍՊԸ | | «Մխիթար Խաչատրյան» ԱՁ | | «Յուլիան» ՍՊԸ | | Բանակցությունների սկզբնական գինը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Բրինձ | 71041,67 | 85250 | | | | | 76208.33 | 91450 |
| 3 | Մակարոն | 42625 | 51150 | | | | | 45208.33 | 54250 |
| 4 | Հաց | | | | | 372000 | 446400 | 392667 | 471200 |
| 8 | Ոլոռ | 27125 | 32550 | | | | | 29062.5 | 34875 |
| 9 | Լոբի | 67812,5 | 81375 | | | | | 71041.67 | 85250 |
| 10 | Կարտոֆիլ | | | 130200 | 130200 | | | 139500 | 139500 |
| 12 | Կաղամբ | | | 108500 | 108500 | | | 124000 | 124000 |
| 13 | Ճակնդեղ | | | 24800 | 24800 | | | 27125 | 27125 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Գազար | | | 24800 | 24800 | | | 31000 | 31000 |
| 15 | Խնձոր | | | 93000 | 93000 | | | 108500 | 108500 |
| 17 | Պանիր | | | 322400 | 322400 | | | 322916.7 | 387500 |
| 18 | Հավի միս | 215708,3 | 258850 | | | | | 232500 | 279000 |
| 19 | Ձու | 193750 | 232500 | | | | | 201500 | 241800 |
| 20 | Ձեթ | 122708,3 | 147250 | | | | | 126583.33 | 151900 |

**Ներկայացրած գնային առաջարկների հիման վրա «ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**(Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

01.02.2022թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա **«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝ 1-3, 5-9, 16, 18-20 չափաբաժիններում՝ «Պիրամիդա Կվինտ» ՍՊԸ-ին, 10-15, 17 չափաբաժիններում՝ «Մխիթար Խաչատրյան» ԱՁ-ին, 4 չափաբաժնում՝ «Յուլիան» ՍՊԸ-ին:

3.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել **«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստերի արդյունքները:

3.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել **«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

3.7 Գնահատող հանձնաժողովը որոշեց **«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4, Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

4.1**«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5, Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

5.1Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6, Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.** (Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

**«ԼՄՎՀԴ22-ԳՀԱՊՁԲ-22/1»** ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում՝ այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Վանաձոր, Բանակի 29 հասցեում:

Հանձնաժողովի նախագահ Դ. Մելքոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Անտոնյան

Կ. Գալստյան

Մ. Պողոսյան

Գ. Եգանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Մանուկյան